




ՀԱՅԲԱՐԱՅԻՆ

ՄԲ ՁԱԳԱՄՍ

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 142

11 ԱՊՐԻԼ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵԴԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍ ԵՍ
ԵՃՐԱՐ
ՏՈՒՐՈՒ
ԿԵԱՆԲ

ՏՕՆԱՑՈՅՑ

Ապրիլ 12 † Կիր. աճ.	Զատիկ. Տօն Ս. Յարութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի :
13 † Բշ. ակ.	Բ. or Զատիկի: Օր մեռելոց:
14 † Դշ. թճ.	Գ. or Զատիկի :
15 Դշ. թկ.	Դ. or Զատիկի :
16 Եշ. զճ.	Ե. or Զատիկի :
17 Ուր. զկ.	Զ. or Զատիկի :
18 Շք. դճ.	Է. or Զատիկի : Տօն է գլխասման Ս. Յով- հաննու Մկրտչին :

ԿԱՐԵՒՈՐ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Երկար ժամանակէ ի վեր պէտքն զգացուած է Ս. Գրոց
ընտիր քարգմանութեան մը Հայերէն աշխարհաբար եւ Թուր-
քերէն լեզուներու: Այժմ Վեր. Յիսուսեան Հարց ջանիւք սոյն
պէտքին զոհացում տրուած է մասամբ: Արդի գիտնականն հե-
տազօտութեամբ նոխացած բնագիրներու վրայէ քարգմանած են
յիշեալ Հարց Հայերէն աշխարհաբարի եւ Թուրքերէնի՝ չորս
Աւետարաններն ու Առաքելոց Գործերը, ուղղելով գրչագիր-
ներու սխալներն ու անճշտութիւնները, եւ մքին ու դժուա-
րիմաց խօսքերուն համար աւելցնելով համառօտ, դիւրիմաց
եւ կարեւոր ծանօթութիւններ:

Լաւ բուղթ եւ մաքուր տպագրութիւն:

ԳԻՆ. Կազմեալ 12 դահեկան, թղթակազմ 8 դահեկան,
մէկ մի տեսք քարտօնակազմ 3 դահեկան:

Կը գտնուի՝ Բերա, Պատրիարքարան Կաթողիկէ Հայոց
(Պայրամ փողոց), եւ Վեր. Յիսուսեան Հարց Բով. եւ Պոլիս
Պալենց եւ Եազընեան գրավանդաններու Բով. եւ Հայաստանի
գաւառաց մեջ, նմանապէս Վեր. Յիսուսեան Հարց վան-
քեր, (Պէյրուք, Ասանա, Կեսարիա, Սեբասիա, Եւդոկիա,
Ամասիա եւ Մարզուան):



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՏՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԲԱԹ-ԱԹ-ԵՐԹ-

Զորրոդ տարի Թ 11 Ապրիլ 1914 Թ Թիւ 142

«Մերական Բանաստեղծական Պոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթները շա-
բունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տարէ, ի բարգաւաճանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթները, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Է. Թեղեան, Հայ-Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիոյ
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 բուհամարաւ:

ԴԵՊՔԵՐ ԵՒ ԱԿՁԲՈՒՆՔՆԵՐ

ԳՈՂԳՈԹԱՅԻ ՄԵՆԱԽՕՍԸ

Սրբազան Լերան վրայ տարածուած էր
անհուն թախիծը, սարսափահար Բնութիւնը
չըջապատած. արիւննաներկ արեւը մայրա-
մուտ հակած էր և շառագոյն լուսինը կէս
մութով պատած. աստղերը կ'արտասուէին
երկինքէն:

Գողգոթա ամայացած էր: Ժողովուրդը
վալելով ու կուրծքը ծեծելով հեռացած էր
աննախընթաց մահուան մը տեսարանէն.
արիւնոռչտ ոխերիմներու ծաղրն ու հայ-
հոյանք լուծ. բարեպաշտ կանայք ու աշա-
կերանները գացած էին թաղման կարեւորնե-
րը պատրաստելու:

Լեւը թարմ արիւնով ցանցնուած, արա-
տաւորուած էր:

Կանգնած կը կենար դեռ ինչը և վրան
գամուած ինչեցեալը երկու աւազակներու
միջեւ, Յիսուս Նազովրեցի քաղաւոր Հրէից
վերաառութեամբ:

Անկենդան կախուած էր ինչեցեալը.
ամբողջ վէրք մըն էր: Փուշերով պսակաւոր
գլուխը դէպի աջ հակած, աչուրները փակ,
չուրթները անշարժ. Կողին բացուած ահա-
ւոր վէրքէն կը կաթէին արեան ու ջրոյ
վերջին կաթիլները:

Ամայի էր Գողգոթա և տխուր. համակ
լուռութիւն:

Յանկարծ շարժեցաւ ստուեր մը, արհաւ-
րալից մարդկային տեսիլք մը. բոկոտն և
վիրաւոր, պատառուն գրգռեալներով, խու-
ռամաղ, այլազունուած, աչքերը խուռչա-
ցած ու մահու ցոլքերով, անարիւն շրթնե-

րով, թողման աշտերով: Անծանօթը շուրջը նայեցաւ վեհերոտ, կասկածոտ. դեղեւուն քայլերով յառաջացաւ: Դէմը կեցաւ խաչեցելոյն, և աղիողորմ նայուածք մը ուղղեց Անոր... Դիտեց ու դիտեց. Ան ալ իրեն նման էր, և ո՛րքան ապշեցուցիչ նմանութեամբ. սակայն վերջին շունչին՝ Անոր մահացած դէմքին վրայ դրոշմուած քարացած էր Դիտութիւնը, աստուածային վեհութեամբ:

Կրկին շուրջը նայեցաւ Անծանօթը. առանձին էր: Խորոճնկ հառաչեց և իր տկար ու դողդոջուն թեւերով յանկարծ փարեցաւ խաչելոյն ու գլուխը դրաւ Անոր կուրծքին վրայ:

Հեղեղանման յորդեցին արցունքները, և հոն նոր սառած արիւնները տաքուցին, թարմացուցին:

— «Դարերով թափառական ու հալածուած, սոսկալի թշնամիներու ճիրաններէն դուռ հիմա պրծած, ոգեսպառ եկած եմ թեւերուդ ապաստան, ո՛վ Սէր անպատում», մրմնջեց Անծանօթն հեծկտալով: «Բոցաշունչ ամենի առիւծներ, մահ սուշող իժեր ու քարեր հալածեցին զիս անդադար և գարնանային ծագմանս իսկ՝ խածին ու թունաւորեցին արիւնս. արիւնս ասուեցաւ երակներուս մէջ. չարութիւնը եղաւ ինձ երկրորդ բնոյթ, երկինքը չար անունը դրաւ ինձի. 'Իո՞ւք ո՞ր չարքո՞ւ եք...: Վատթարացաւ ոյժս, ինկաւ կորովս, «Ապականեցայ ու պլծեցայ» և գետնաքարչ սողաց հողիս տիղմերու մէջ: Իմ ամպարչտութիւնս հեծեց և իմ սպառնալուռ աւերս լացաւ, աւաղեց տիեզերք համբուն: Մաղիկս թօթափեցաւ, գարունս խամրեցաւ, քանզի ապստամբեցայ Քեզմէ և հետեցի: Անհուն և անվերջ ցաւ ու վայ կը սպասէ ինձի. անդունդները բացած են իրենց բերանը իմ վրաս: Ո՛վ խոստացուած Փրկիչ, որսորդէն հաւապնդուած ճնճղուկի մը նման ապաւինեցայ քու թեւերուդ. «Մեղա՛յ յերկինս եւ առաջի քո»: ...Երկինք գոցուած, համակ պղինձ կտրուած, Աստուած զայրացած, վրէժխնդիր, պողովատիկ կը կը ճօճայ գլխուս վերեւ կայծակնացայտ... արարածոց գարշանքը եմ եղած, լափիզող

բոցերուն պատրաստ կերակուր... ջիղերս կը դողան մահահրաւէր սարսուռով... բայց ես չեմ վախնար. Քեզի փարած, քեզի փակած, կ'արհամարհեմ այս ամէնը: Դու իմ պատկերս ես. Դու իմ ազգակից, իմ վրէժ, իմ զոհը... այո՛, այո՛, իմ Զոհն ես Դու: Ե՛ս ինկած էի վիրաւոր երիքովի աւազակներէ. Դու բարերար Սամարացի, փաթթեցիր իմ վէրքերս. մարդկեղէն իմաստութիւնն ու Մովսիսական օրէնք ապիկար գանուկեցան զիս վերանորոգելու. Դո՛ւ վիրաւորուեցար, իմ վէրքերս բուժելու համար, Զոհ անարատ և բաւարար: Խայտառակութեան այդ փայտին վրայ զենուեցար գառնուկի մը պէս, անտրտունջ և անբարբառ. այրեցար մրկեցար սիրոյ կրակով, Որդի Աստուծոյ կենդանւոյ: Չեղաւ չափ Քո խոնարհութեանդ ու ցաւերուդ, ամբողջ կեանքիդ մէջ. ուզելով, փափաքելով վաղեցիր չարչարանքներու. սիրտդ կը դեղուր սիրով ու ցնծութեամբ երբ վերջին ընթրիքիդ մէջ կ'աւետէիր մահդ, և խոնարհած կը լուայիր կոշտ ոտքեր: Դու անխնջ վաղեցիր մոլորած ոչխարին ետեւէն՝ խոստանալով անհուն թողութիւն. և իմ մեղքով, մարդկութեան անհասնում սոսկալի մեղքով վր պատեցար՝ ինչպէս ձուկը ծովու մէջ. Մեղքը վրադ առիր ըլլալու համար միակ մեղաւորը, որովք, ողջակէզը. զգեցար Մեղքը լաթի մը պէս, և այնպէս ներկայացար Հօրդ վրէժներուն... Եւ մահու տագնապները պաշարեցին զՔեզ: Հայածական տերեւի մը պէս դողդղացիր Պարտէզին մէջ, տրտմութեան երկաթեայ ճիրաններէն կուրծքդ սեղմուած. մարդիկ ու Աստուած թուղուցին զՔեզ, հարուածեցին զՔեզ անխնայ: Եւ դժոխք բոցավառեց իր բարկութիւնը: Ատելութիւնը յարձակեցաւ վրադ ամենի: Ապերախտութիւնը մատնեց զքեզ, ու ծախսեց արծաթսիրութիւնը. բարեկամ ու սեղանակից աշակերտդ՝ ծախեց զքեզ: Եւ ծաղր ու արհամարհանք, հայհոյութիւն և ուրացութիւն, և կապանք ու թուք, ապտակ ու կռուժ ու ձաղկանք սահանարար խուժեցին վրադ. Լքում, Լեղի, քաղցրիկ մօրդ

ցաւերը պատուեցին սիրտդ, և գամերը ծաւ-
կեցին օրհնեալ ձեռքերդ ու ոտքերդ. և ե-
րեք ժամու հոգեվարքի մէջ, անպատմելի
կծկումներով, սարսուռներով ու ցաւերով,
կամաց կամաց երակներէդ քամուեցաւ ամ-
բողջ արիւնդ: Իմ զոհն ես Դու. Դու իմ
Ողջակէզն ես. ինձ փոխան Դու պատարագ-
ուեցար և ես պիտի փրկուիմ:

«Տեսայ ես զՔեզ... այո, Հաւատքս ա-
ւելի լուսաւոր է քան աչքս. զի հաւատ-
քիս արեւը Դու ես: Տեսայ զքեզ. աղքատ
և նախասալից եղար կրանքիդ մէջ. ամէն
բանէ զուրկ. հեզ եղար սակայն, գթած ու
խոնարհ եղար. աշխատեցար, քաշեցիր,
քրտնեցար, յոգնեցար, լացիր ինծի համար.
մարդկութեան ամենամեծ դէմքը իսկ, ըլ-
լայ՝ Սոկրատ անունով, կը նուաղի Քու
վերնութեանդ առջեւ, ինչպէս փոսուռայն
արեւու առջեւ. սակայն և այնպէս ա՛յսքան
անիմանալի Մեծվայելչութեամբ հանդերձ,
անմահ տիպարն եղար գթութեան: Եւ հի-
մա ամբողջ վէրք մըն ես. ոչխարի պէս մոր-
թուեցար՝ իմ վէրքերս բուժելու համար:
Թագաւոր ես, ու Գահդ ինչն է, թագդ՝
փշեպսակը, մականդ՝ եղէգ ու գամ: Զեռքդ
գամուած է, չի կրնար սուր գործածել. այդ
գամը Քու սուրդ է, Քու զրիչդ է այդ գա-
մը, որուն ծայրովը գրեցիր ազատագիրս Քու
արեամբդ, ինչպէս աստուածեղէն մատեն-
քովդ երկնակամարին վրայ գրած էիր աստ-
ղերուն խորհանճար տառերը... Այդ ձեռ-
քերդ ես ծակեցի, որպէսզի ստիպուիս զիս
գրկելու. ոտքերդ ե՛ս գամեցի, որպէս զի
չփախչիս ինծմէ հեռու: Կուրծքդ տէգի
բուռն հարուածով մը պատուեցի, սիրտդ
խոցեցի. ամպարչտեցայ՝ այո՛, բայց երկնից
դուռը բռնադատեցի, խորտակեցի՝ ուրեմն.
արքայութիւնը յարձակմամբ առի: Եւ Դու
իսկ եղար զօրավարը այս յաղթութեան որ
Քու մահդ է. և ապա Քահանայապետն ե-
ղար այս ողջակէզին որ Դու ինքն ես: Լուած
ես, լուած. ինչո՞ւ լուցիր, ո՛վ Բանդ Հօր.
Ընդուդ քիմքիդ կցեցաւ. ընդլով դառնացաւ
քաղցր բերանդ... ո՛հ թէ խօսէիր, ո՛հ թէ
արտասանէիր բառ մը, բա՛ռ մը միայն. ըսէիր

ինծի, «Ռեգեակ». ըսէիր. «Հա՛յր, բո՛ղ դմա».
ոսէիր. «Այսօր ընդ իս իցես». ո՛հ, լսելի
որէ՛ ինծի ձայնդ, որ դեռ այս տիտուր մըթ-
սոլորտին մէջ թեթեւ կ'արձագանգէ: Երա-
սի՛ թէ վերջին շունչդ ես ժողոված ըլլայի...»

«Բռնեցի զքեզ ու չպիտի թողում. ինք-
զինքդ տուիր, խաչուած ես, չես կրնար
փախչիլ. փակուած ես տապանակին մէջ,
իմ սրտիս մէջ, իմ խօսքիս հնազանդ. չե՛ս
կրնար մեկնիլ, մինչեւ ի կատարած աշխարհիս
Գիտեմ զիս, գիտեմ և զքեզ. գիտեմ զիս և
մեղք իմ առաջի իմ են յամենայն ժամ. գի-
տեմ և զքեզ ո՛վ ես՝ Սուրբն Աստուծոյ. և
սակայն Դու հրամայեցիր, և անհուն է վըս-
տահութիւնս. պիտի մաքրուիմ Քու Արեամբդ,
պիտի սրբուիմ քեզմով, պիտի փրկուիմ,
պիտի երջանկանամ: Եւ ես Քու պաշտելի
Անունդ ու Սէրդ պիտի տանիմ գերահուշակ՝
մինչեւ աշխարհքիս ծայրերը, ուր արեւը
կ'այրէ կամ բեւեռը կը սառնոյնէ: Քու
Անուանդ համար պիտի տառապիմ, արիւնս
պիտի թափեմ դարերով, անպատմելի տան-
ջանքներու տակ. Քու յիմարի լաթդ պիտի
զգենում և անբաւ իմաստութիւնդ պիտի
քարոզեմ և յիմարիմ Քու սիրոյդ համար.
Քու կեանքդ, Քու վէրքերդ մշտնջենաբար
պիտի նորոգեմ յիս, հաւատարիմ վկայու-
թեամբ ու սրբութեամբ. և իմ մանկտի, իմ
կոյսեր, իմ երիտասարդներ, իմ ժողովուրդ
անթիւ անհամար պիտի բերեմ Քեզի երկըր-
պագու, դարերով՝ անվերջ դարերով. անա-
բատ Հարս մը պիտի ընծայեմ Քեզ, զար-
դարուած Քու սիրով, Կենաց Հացովդ քաղ-
ցես պիտի անցունեմ, և յԱզամայ արտմեալս՝
փրփրազէզ բաժակաւդ պիտի արքնամ, Քու
Արեամբ: Այո՛, Քու Արիւնդ իմ վրաս և իմ
զաւակներուս վրայ... մինչեւ որ նորոգ-
ուիմ Քու կենդանութեամբդ, մինչեւ Դու
գաս միւսանգամ»:

Անծանօթին հառաչներն ու հեծկտանք
խզեցին անոր ձայնը: Զոյգ բազուկները
փաթթեց ինչեղոյն շուրջ, և զգաց Անոր
ցաւերը, ձաղկանքին, վէրքերուն և գամն-
քուն ցաւերը, և սարսուռներ անցան վրա-

յէն. աւելի ուժգին գրկեց խաչեցեալը, և արիւն ներկուեցան մերկ բազուկները և ձախ դաստակին վրայ կարմորակ չիթ մը կաթեցաւ խաչեցեալին կողին վէրքէն, ու հեղուկ կորազիոնը վարդ ակօս մը բանալով սահեցաւ բազուկն ի վար: Անծանօթը իր կոշտ մատներով սկսաւ շոյել խաչեցեալին դեղձան մազերը, արիւնաթաթաւ էին այդ դեղձանիկ մազերը. մատները կարմրեցան. շոյեց այն գունատ դէմքը՝ խաւարած Արեւուն, թողած Վարդին, մեռած Անմահութեան. շոյեց արիւնած այն շրթունքները, անշարժ ու անբարբառ այն քաղցր շրթունքները. և հեծելով հառաչեց.

«Ո՛վ անմահութեան ծաղիկ շրթունքներ, կ'ուզեմ համբուրել զձեզ. կ'ուզեմ համբուրել այս աստուածային շրթունքը և խունկ մը ըլլալ ամբողջ էութեամբ և լուծուիլ սիրոյ բոյրին մէջ: Կ'ուզեմ համբուրել այս շրթունքը՝ որ զԱստուած կատարեալ կերպով և հաւասար իշխանութեամբ օրհնեցին. և իմ տեղս գոհացան, և ինծի համար աղօթեցին, և ինծի կեանքի ճամբան սորվեցուցին, և խօթութիւններուս բժշկութեան ու երկիւղիս փարատումին ու թշնամիներուս արտաքսման անդիմադիր հրամաններ պատգամեցին, և իր սիրտը երթալու վստահելու միանալու, ու իր Մարմնոյն և Արեանը յաւիտեական յիշատակը կատարելու սիրազեղ հրաւերներ մըմեջեցին. և միշտ քաւելու, միշտ պաշտպանելու, միշտ փրկելու ու յարուցանելու երդումներ ըրին. և՛ նոյն իսկ խաչին վրայէն, երանական սիրոյ անմահացուցիչ արեցութիւնները պատմեցին... կ'ուզեմ համբուրել այս քաղցր շրթունքը, զորոնք Մարիամ առաջին անգամ համբուրեց սիրապատար... Սակայն, զարշնք անհնարին և սոսկումն. ի՞նչպէս կրցաւ, ո՛վ Տէր, ի՞նչպէս կրցաւ Յուդա համբուրել այս աստուածային շրթունքը, առանց ամչնալու, առանց դողալու. ի՞նչպէս մատուցիր անոր այս օրհնեալ շրթունքը, երբ անոր սրտին ու աչքին մէջ կը վառէր զժողովի բոցը. ի՞նչպէս անոր մեղքի այրուցքով կծկած պիղծ ու մատնիչ պոկուները կրցան շօշափել

այս մաքուր ու սիրանուէր շրթունքը: Ո՛հ, ե՛ս եմ Յուդա... երբ մեղաթաթաւ, երբ սրբապիղծ մօտեցայ Քեզ ի համբոյր, և դու խոնարհ ու թախծագին՝ մատուցիր ինծի օրհնեալ շրթունքդ՝ արտասուախառն հեծելով. «Բա՛րեկա՛մ»... ե՛ս ալ Յուդա եմ, բայց ո՛չ յուսահատ: Կրկի՛ն կ'ուզեմ սակայն համբուրել այս օրհնեալ շրթունքը և ճաշակել Քու խմած լեղին, և անհուն քաղցրութիւնդ միանգամայն: Եւ դու իսկ համբոյրի սիրահար ես՝ ո՛վ Յիսուս, անմահ համբոյրի. Գանգատեցար Փարիսեցիին թէ «Համբոյր մի ո՛չ ետուր ինձ», և գովեցիր Մազադեանացին թէ՛ «Սա աւասիկ յորմեհեսե մեծալ եմ ո՛չ դադարեաց ի համբուրելոյ զոսս իմ»: Պիտի աղաղակեմ առ Քեզ երկնաւոր Հարսիդ հետ. «Համբուրեցի զիս ի համբուրից բերանոյ իւրոյ», որպէս զի մաքրուիմ ամէն երկրաւոր աղտէ. մեղու մը այնչափ չի ծծեր քաղցրութիւնը ծաղիկին, որքան ես ի համբոյր սրբութեան պիտի ծծեմ այդ արիւնոտ շրթներէդ անմահ երանութիւնը: Ո՛վ հա՛յր, համբուրէ՛ աս անառակ որդիդ ինչպէս գթած հայրը «Անկեալ զպարանոցաւն նորա եւ համբուրեաց զնա»...:

Շատ թախանձեց Անծանօթը խաղաղութեան համբոյրը, բայց մահը անողոք էր. անշարժ էր խաչեցեալը և Անոր շրթունքն անշարժ:

Անծանօթն հեղձամղձուկ կ'արտասուէր: Կէս մութին մէջէն մէկ մը շարժեցաւ. կին մըն էր որ կը մօտենար յամրաքայլ: Դէմքը տոգոյն էր բայց ճառագայթող, աչքերը արտօսալիր, ճակատը պերճ և սիրտը խոցուած: Համակ գթութիւն էր: Յայնվայր ունկնդրած էր թշուառ Մենախօսին: Մօտեցաւ, ու խանդաղատանօք զգուեց խաչեալին դէմքը ու ըսաւ. «Որդեա՛կ, համբուրէ՛ զինքը»: Մասանեցաւ խաչեցեալին մեռած մարմինը. կէս բացուեցան ծանրացած արտեւանուները և անհուն ողորմութիւն կաթեցուցին թալկացած բիբերը, յանկարծ ազատեց բազուկները և ամուր փարեցաւ Անծանօթին, սեղմեց զայն իր կուրծքին և ուժգին համբուրեց: Անծանօթին շրթներն

արիւն ներկուեցան այս սասուածային համ-
բոյրէն . սիրտը բարախեց թունդ ի թունդ .
դէմքը փայլեցաւ . վերակենդանացաւ՝ արեւ-
ւէն համբուրուող կքած ծաղկի մը պէս .
ու երջանիկ զմայլումով ինկաւ ցաւագին
Աստուածամօր գրկին մէջ հուսկ հառաչ ար-
ձակելով՝ «Մայր» . . . :

Եւ երբ բարեգործ և արդար Արեմաթաց-
ւոյն ու իւր մեռելաթաղ ընկերաց ու վար-
չամակներ ու կտաւներ բերող բարեպաշտ
կանանց ոտնաձայնն սկսաւ լսուիլ , արդէն
անյայտացած էր Անծանօթ Մենախօսը :

Ո՞վ էր ան . . .

Փրկագործուած Մարդկութիւնն էր :

ՊԻՐ ԿԵՆՃ ԳԸԶԸՆ ՏԵՖԹԵՐԻ ԽԱԹԸՐԱԹԸՆՏԱՆ (Տեկամի)

1889 Հոկտ. 1. — Մարտիրոսյւզգ կիւնիւ . . .

Այլքը այտան պէրի գուլլանտըղըմ հէր
տիւրլիւ թէտապիրէ րազմէն , րէճալարմա ,
խարալարմա րազմէն զէվճիմի եռմշաթմա-
ղա միւլէֆֆազ օլամատըմ , Ժագ աշխարհա-
կանլար թարաֆընտան իտարէ օլունան մէք-
թէպէ կիտէճէք տիր . . . :

Չաթէն պունտան գորգուօրտըմ , Պէլքի
պու ֆիքիրտէն զէվճիմի ֆէրաղաթ իթտի-
րիրիմ զաննըլա , գապիլ օլտուղը գատար չօ-
ճուղը էվտէ սագլատըմ :

Բէնտիմի ալտաթմաղա լիւզում եօգ տըր .
պու կիւն Լիսե տէմէք , Ալլահըրգ , մէզնէպ-
սիզ , տուասըզ պիր թէրպիյէ ալմագ տէմէք
տիր , Գօճամ տա Լիսետէ թահիլ կէօրմէ-
մի՞ն մի տիր , զաթէն մէզնէպինի օրատա զա-
յիպ իթմէմի՞ն մի : Ժագըն տա օլուպ օլաճա-
ղը օ տըր :

Պէն , օղլումըն րուհպան թարաֆընտան
իտարէ օլունան պիր մէքթէպէ տէվամ իթ-
մէսինի արղու իտէրտիրմ : Օրատա տինտար-
լըզ էօյրէնէճէքտի , Բիլիսայը սէվմէյի էօյ-
րէնէճէքտի , Հալպու քի Լիսետէ , քահանա-
լարտան , մէզնէպտէն գաչմայը էօյրէնէճէք
տիր : Օրատա արգատաշլարընըն , պէլքի տէ
մուալլիմէրինին , մուգատտէս չէյլէրէ գարը
քիւֆր իթտիքլէրինի իշիտէճէք տիր :

Չօճուղը գապթ իթմէք արթըգ պէնիմ ի-
չուն միւլքին օլամայաճագ տըր :

Եօգ , եօգ , պունլար վահի գօրգուլար տէ-
յիլտիրլէր : Եաղը՞գ , պէն նէ՞ գատար պէտ-
պախթ պիր գարըլըմ :

Ահ , քեաշքի մէզնէպինէ սատըզ պիր գա-
թօլիք իլէ էվլէնմի՞ն օլայըտըմ . . .

Էվլէթ , օ վագըթ տա պէտպախթլըզլա-
րըմ օլապիլիրտի . ֆագաթ սէվտիյիմ ճանլա-
րըն զայիպ օլմասընը կէօրմէք կիպի պէտ-
պախթլըզ թէսալվուր իտիլէպիլի՞րմի :

1894 Մարտ 30. — Տիւն ազչամ մաթ-
պուաթ հագգընաա պիր գօնֆէրանս տիյնէ-
տիմ , Կէօղլէրիմ աչըլտը , Գօճամըն քէնտի
դաւճը իչուն Ալլահտան իհսան օլունան պու
գատար լութֆլարա գարըր գօմասընըն սէ-
պէպի հէր հալտէ օ հէր կիւն օգուտըղը տին-
սիզ զազէթանըն նէթիճէի թէէսիրինտէն օլ-
մալը , Հէր կիւն զէհիրլէ թէղատտի իտէն
պիր րուհ Ալլահը նասըլ սէվէպիլիր : Պիր տէ
չու մէնֆուր զազէթատան վագ կէչմէսի ի-
չուն չալըչայըմ . . . : Գօրգարըմ քի պու երեզ-
տէն արամըզտա նիզա չըգաճագ տըր :

1894 Մարտ 31. — Ս . Յովսէփ այլընըն գա-
բանմասը կիւնիւ . . . :

Ղազէթա մէսէլէսինի աչմաղտան էվլէլ ,
պու սապահ Հաղորդութիւն ալտըմ , Տէտիմ
քէնտիսինէ քի եարտըղը եօլսըզ տըր . . . րու-
հընը զէհիրլէյօր . . . մէզնէպէ տայիր օ կա-
զէթանըն վէրտիյի հալատիսլէր հէք եալան
վէ եանըլը տըր . . . եանըլըրգ արգասընա
տիւչմէքտէն իտէ , հագիպաթը արամասը ի-
ճապ իտէր . . . օգուտըղը կազէթա մէզնէպէ
գարըր րուհ իլէ տօլու տըր , ախլէագ խու-
սուսընտա տա պօզուգ տըր :

Ճէվապէն , պանա . «տէն եանըլը տիւչիւ-
նիւյօրսըն , խալալաթա գաբըլըյօրսուն , պէ-
նիմ օգուտըղըմ կազէթա ֆէնա տէյիլ տիր ,
պէն օնտա հիչ պիր ֆէնալըզ կէօրմէյօրըմ . . .
հէմ տէ պու կիւն պէն արթըգ չօճուգ տէ-
յիլիմ , տօղրուլը եանըլըրգտան թէֆրիք ի-
տէպիլիրիմ» , տէտի :

Չաթէն պու կիպիլէրին քեաֆֆէսինին տէ
վէրտիյի ճէվապ պու տըր , զանն իտէրսին :
Գօճամըն ճէվապը աղըրըմա կիթտի , ֆա-

զաթ պէն պունա թէաճճիւպ իթմէտիւմ :

Անճազ պէն չու սուրէթլէ իսրար էյլէ-
տիւմ վէ տէտիւմ քի «Ժագ պու կազէթայը
հէր կիւն կէօրիւյօր, ալըյօր, օգույօր . . .»
Աճէպա չօճուզ րօմանլարսան, հիքեայէլէր-
տէն, չէքքիքլէրտէն միւթէէսսիր օլմա՞զ մը,
օնուն մասոււմ րուհը պօղուլմա՞զ մը . . . Պիր
վագըթտան պէրի չօճուղըն թէպտիլ օլտու-
ղընըն ֆարզընտա տէյիլ միսին . . . իւզէրին-
տէ զարիպ ահվալի քէչֆ իտէմէյօրմըսըն :
Կէօրմէյօրմըսըն քի Ժագ արթըզ էվէլքի կի-
պի պիզէ սարղըն տէյիլ, արթըզ գալպինի
պիզէ աչմայօր . . . կիզլէյօր . . . Պու հալինտէ
մուալլիմէրինին, արգատաչլարընըն, օգու-
տըղը քիթապլարըն տէյիլի եօ՞զ մը տըր զանն
իտէրսին :

Թէքրար պանա ճէվապ օլարագ, գարը-
լարըն գուվվէյի մուխայեիլէսի գուվվէթլի
օլտուղընը սէօյլէտի :

Ահ, նէ՛ չէքիլմէզ հալիւմ վար տըր : Պէ-
րէքէթ վէրսին քի չէքտիյիմի քիմսէ պիւմէզ :
1896 Ապրիլ 16. — Պու նէ՞ կիւն տիր,
եա Բապպի : Պիւթիւն րիւյալարըմ խարապ
օլտու . ումտուղըմ տաղլարա հէր դար եաղ-
տը :

Ժագ պու կիւն օն սէքիզ եաչընտա տըր :
Յունվար պիրտէն պէրի պապասընըն եազը-
խանէսինտէ չալըչըյօր : Պու ոապահ Զատիկ
եազլաչըյօր օլտուղընը, պինաէն ալէյհ տէ
Սրբութիւն ալմագ պօրճընը իյֆա իտէճէք
վագըթ կէլմիչ պուլընսորղընը սէօյլէտիւմ : Ծէ-
վապէն պու շէյին պանա ալիտ օլմատըղընը
սէօյլէտի վէ շունը տա իլաւէ իթտի քի,
«պէն Լիսէտէն չըգտըղըմտա սօն սէֆա օլմագ
իւզրէ խոստովանանք օլմուշտըմ, չիմտի եէ-
նիտէն պաչլամայա տա արզոււմ եօզ տըր» :

Աղլատըմ . . . ահուզար չէքէրէք աճի աճի
աղլատըմ . . . Ժագ պուհտուն միւթէէսսիր օ-
լարագ, «Անաճըղըմ, նիչի՞ն աղլայօրսըն,
եօգսա պէն էյի պիր չօճուզ տէյիլ միյիւմ»,
տէտի :

Պու հալի պապասընա սէօյլէտիւմ, մէսէ-
լէյի օլմուշը կիպի օնա տա անլաթտըմ : Հայ-
րէթտէ գալտը : Ժագը ալըրճա եանընա չա-
ղըրարագ ուղոււն ուղատըյա պիր թագըմ

չէյլէր սէօյլէտի իսէ տէ, չօճուզ՝ «Զատիկտէ
Սրբութիւն ալմագլըզ ատէթիմտէ տէվամ
իթմէքլիյիմի նիչի՞ն թալէպ իտիյօրսըն : Սէն
հիչ պիր Բապալիաաա Սրբութիւն ալըյօր-
մըսըն, եօզ : Շու հալտէ սէնին եաքմատըղըն
չէյի պէնտէն նա՞սըլ իսթէյօրսըն» : տէր :

Պու խուսուստա Ժագըն սէօզլէրինտէ պիր
մանթըզ վար տըր . . . թա իլք Սրբութիւնը
ալարղը կիւնտէն պէն, իչին պու րատտէյէ
եէթիչէճէյինի կէօրիւյօր, կէօրիւյօր տա օնա
կէօրէ տէ գօրգույօրարմ . . . Փապաթ ին-
չալլահ ճէնապը Հագգ շէրտէն խայր չըգա-
րաճագ տըր իւմիտինտէյիւմ, չիւնքի գօճամը
Ժագըն պու ճէվապընտան ֆէվզ էլ ատէ միւ-
թէէսսիր օլմուշ կիպի կէօրիւյօրմ :

(Մապասի վար)

Ա Զ Ա Տ Ո Ի Թ Ի Ի Ն

Գ .

ՃԵՄԱՐՏՈՒԹԻԻՆԵ ՐԱՐՈՅԱԿԱՆԻ ՀԱՆԴԷՊ

(Շար. եւ վերջ)

Ունինք ուրեմն դիմացնիս առաքինաց-
ման կրքերը և մղստուհակ կրքերը : առա-
ջինները աղատութեան րնթացքը կը դիւ-
րացնեն և կը փութացնեն ի բարին, իսկ երկ-
րորդները կը կասեցնեն զայն և կը խափա-
նեն ձգելով չարութեան գիրկը . ուր կրնան
գերել ցմահ : Ներկայացաւ օր մը Կեսարի
չուառական մը, որ կեանքի նիւթական զըժ-
ուարութենէն վհատած, յաղթուած ձախոր-
դութենէ, կը խնդրէր որ գինքը սպաննէ կըր-
ճատելու համար թչուառութիւնը . «Լճնդ
սպանեմ, քուառական, րաաւ, երբ արդէն
մեռած ես» : Ահա մեր ալ ըսելիքը անոնց,
որ առաքինանալու քաջութիւնը չունենա-
լով՝ կը յաղթուին չարէն և կրքերնին գետ-
նաքարչ ստորնացման միջոց կ'ընեն՝ փոխա-
նակ խրախոյս ընելու առ բարին : Անոնք որ
յանուն աղատութեան կը լկտիանան, կ'ա-
պըստամբին, կ'ասպատակեն, կը ստեն, կը
հայհոյին, պիտի հրաւիրէի աղատութիւնին
ցուցնելու ներհակ առաքինութեանց մէջ,
որոնք չար միտումներու հոսանքին դէմ առ-

նաբար ճակատում ըլլալով ալ աւելի ցայտուն կ'ընեն ազատութիւնը և զայն իր բնական մղումին մէջ կը դնեն։ Առաքինութիւնը ու մանք կարգի և պատշաճութեան պահպանութիւն ըսին, ուրիշներ ճակատաբար արհամարհանք, այլք քաջութիւն և խիզախում, ոմանք ալ օգտի և հաճոյականի ծառայութիւն։ Ո՛չ, կ'ըսէ ուղիւ բանականութիւնը և ճշմարիտ հաւատքը։ առաքինութիւնը հոգւոյ զօրութիւն և արիութիւն ըսել է չարին յարուցած դժուարութեանց դէմ և անկարգ միտումներու հոսանքին հակառակ չափաւորութիւն ըսել է ազատութեան գործածութեան մէջ, որ օրինաւոր եղբրքներէն դուրս ելլելէ կ'արգիլէ։ Թեւն է որ կը վերացնէ ու կը խոյացնէ զէպի բարւոյն մաքուր հորիզոնները՝ աշխարհաբար թողմբու մէջէն, հրեղէն կառքն է Նդիայի որ մեր հիւանդ ու քաղելու անկարող բնութիւնը կը փոխադրէ արագապէս զէպի կատարելագոյն ու վախճանական բարին։ սպառազինութիւն է մեր բարւոյն ոխերիմ փորձութեանց դէմ։ առագաստ է որ դիւաշունչ հովերն իսկ իր նաւուն յառաջացման օգտակար կ'ընէ։ ներդաշնակութիւն ըսել է, որ չարութեան եւ ստորին կիրքերու խլացուցիչ աղմուկը կը սրբազորէ և հոգեզմայլ, հոգեզուարթ երգերու կը փոխէ։ զգօնութիւն ըսել է, որ բանաւոր մարդը կը վերացնէ բարձր տեսութեանց ու զգացմանց մէջ խելով զայն եւսասէր, անձնապաշտ գոհիկ ու գծուծ ցածութենէ։ Առաքինութեան այս վեհիմաստ զաղափարն էր զոր Սենեկա հեթանոսաց չաստուածներու վրան իսկ չգտնելով կը հրաւիրէր զմարդիկ զԱստուածներն ալ գերազանցելու եթէ կ'ուզէին առաքինանալ։ Եւ այդ անհնարին կ'ըլլար կռապաշտ մարդկութեան, անոր համար ալ եպիկտետոս կ'ըսէր։ «Կը տեսնեմ քի որմէ փախչելու եմ, բայց չեմ գտներ մէկ մը, որուն հետեւիմ»։

Իսկ մենք քրիստոնեայքս ունինք, փա՛ռք Աստուծոյ, ամենալսեմ բարոյականութեան օրինակները և նախ նոյն ինքն մեր աստուածային առաջնորդը զՅիսուս Քրիստոս։ «Հայեցումք ի զօրագլուխն հաւատոց եւ ի

կատարիչն Յիսուս» և անոր հետեւող սուրբերու բազմութեան հետեւինք և անա բարոյականութեան դատը չարին դէմ պիտի յաղթանակէ։ «Այսուհետեւ եւ մեք որ այսչափ շուրջ զմեզ մածեալ ունիմք զբազմութիւն վկայից, զհպարտութիւն զամենայն ի բաց ընկեցումք եւ զմեղս կարեւորս. համբերութեամբ քննասցումք ի պատեհումք որ առաջի կայ մեզ» (առ եբր. ժ. 1—2)։ Աւմէն մեղք հպարտութիւն ըսել է, և անա «զհպարտութիւն զամենայն» կ'ըսէ Առաքեալը։ չար կրքերու գերութիւն է մեղքը և անա «զկիրս կարեւորս» ըսելով այդ կրաւորական ձգտումներու անձնատուութիւնը կը նշանակէ։ Անոնց դէմ առաքինութեան պատերազմը մղելու է և առաքինութիւնն արիութիւն, քաջութիւն ըսել է։ հետեւաբար առնապէս, արիաբար չարին դէմ պատերազմելու կորույն է, որ մարդկային քանաւոր ազատութեան աղնուացումն է և բնական ընթացքին զօրեղագոյն մղումը։ Ուստի ազատութեան պատիւն ու ընթացքը ապահովելու համար առաքինանալու է։ Եւ առ այդ կարեւոր է ամէն բանէ առաջ մեր անկարգ միտումներու, մեր անձնասէր եսին դէմ պատերազմ բանալ, որ դժուարագոյնն է ամէն պատերազմներէ, վասն զի մեր ամենամօտ սիրելւոյն դէմ է, մեր եսին դէմ, որ ամէն թշնամիներէ աւելի մօտ է մեզ, մեր ներսն է, չարունակ հետերնիս է, և մեզ հետ նոյն ըլլալուն համար, դիւրաւ բարի կը ներկայացնէ ինչ որ չար է։ Սակայն ինչ որ ալ ըլլայ, հարկ է պատերազմիլ, հարկ է առաքինանալ, եթէ կ'ուզենք ազաւորութիւննիս, մեր եսին վրայ ունեցած տիրողութիւննիս ցուցնել, որուն մէջ է ճշմարիտ ազատութիւնը։

Նիւթէս դուրս շեղած չպիտի ըլլամ, եթէ հրաւիրեմ զձեզ նկատելու ազատութեան արժանաւոր պատկերացումը Պատմոսի Տեսանողին հրաշալի տեսիլքին մէջ։ Ընդհակառակը շատ յարմար է այս իբրեւ վերջաբան՝ ժողովելու համար տգեղ տպաւորութիւնը, զոր գուցէ ըրած պիտի ըլլայ խայտառակ և պիղծ արձանացումը գաղղիական յեղափո-

խութեան, զոր դիտմամբ յառաջարան ըրի ճառիս: Ասով աշխարհի և աշխարհասիրաց ազատութեան գերութիւնը, իսկ քրիստոնէաբար առաքինացման լիազօր ինքնիշխանութիւնը գիւրաւ պիտի կարենանք համեմատել: Կին մը հիանալի, փառազգեստ, թեթեւ ամպերու վրայ կանգնած, ստփին տակ ճգմած է շուայտութեանց պատկերը՝ գիշերաշրջիկ լուսինը. արեւով զգեստաւորուած, գեղատեսիլ. ձեռքերը կուրծքին սեղմած, աչքերը յերկինս սեւեռած, լուսոյ լնակարան մըն է կարծես և երկնքի լուսամուտը, արեւելեան դուռը փակեալ, ուսկից մէկը չանցաւ բայց միայն Տէրն Իսրայէլի: Ահա արձանը զոր պիտի ուզէի նուիրուած տեսնել ազատութեան ճշմարիտ գաղափարին, որով միայն Գաղղիոյ յեղափոխութեան և անոր հետեւող հեշտասիրաց՝ ազատութեան դէմ ըրած նախատանքին հատուցում մը կրնանք ըրած ըլլալ: Եւ կ'արժէ այդպէս ընել. ամբողջ մարդկութեան մէջէն մէկ հատիկ մը գտնուեցաւ, որ չունեցաւ կամքի հիւանդութիւնը, որուն հետեւաբար սիրան եղաւ բուրումնաւէտ պարտէզ մը, հանդիսական Աստուծոյ, փակուած մեղքի նեխութեան դէմ. «անդամացան մաքուր ի փոքոց մեղաց» (Երէն.). որուն մէջ չի կրցաւ մուտք գտնել ու սողոսկել՝ նոյն իսկ գաղտնաբար, չարութեան վիշապը: Թշնամութիւնը յարատեւ է այս կնոջ ու մեղաց փորձիչին մէջ, անոր զաւակաց և անոնց որ ի հօրէ ի սասունայէ են: Եթէ այս մարդասպան վիշապին հետեւողները կը ստորնանան մինչեւ զարշութեան և կ'երթան լիտի կնոջ մը խունկ տալով ազատութիւնին ծախելու. մենք յաղթական կնոջ, Անարատ յղացելոյն զաւակունքս, պիտի խնկենք անմեղութեան և առաքինութեան, բարձրացնելու համար ազատութիւնն յոտս ճշմարիտ ազատագրութեան մօր, մարութ Տիրամօր, նոր Յուդիթին, որ զՀողովիէնէն գլխատելով վերացուց զմարդն յազատութիւն բարոյականութեան, որով ազատեցոյցն զմեզ Քրիստոս:

ՓՈՂ.

Վ Ե Ր Զ

Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ (*)

ԱՌԱՋԻՆ ԴԱՐԵՐՈՒՆ ՅԵՏԱՏԱԿԱՐԱՆԵՐՈՒՆ ՄԷՋ

(Շար.)

Բայց Ս. Հաղորդութեան այս խորհրդաւոր ձեւակերպութիւնը զոր միակերպ և շարունակ կը գտնենք ներկայացուած Հռոմայ գետնազամբաններու յիշատակաբանացը մէջ, և որ այնչափ լաւ կը համաձայնի Ս. Հարց և եկեղեցական մատենագիրներու վկայութեանց հետ. զարմանալի հաստատութիւն կը գտնէ նաեւ շուրջ երկրորդ դարու քրիստոնէական երկու հոյակապ արձանագրութեանց մէջ, որոց մին կը պատկանի Արեւելեան, իսկ միւսը Արեւմտեան՝ Եկեղեցւոյ:

Առաջինն է շքեղ գամբանական արձանագիրը. յունարէն լեզուով, Աբերկիոսի՝ Եպիսկոպոսի Հիերապոլիս քաղաքին Փոխգործ, Մարկոս Աբերկիոսի ժամանակին. բնագրին պարունակութիւնը ծանօթ էր այս սուրբին վկայաբանութենէն, զոր հրատարակելին Մետաիրաստէս և Բոլլանդինսք: Աբերկիոսի այդ արձանագրութիւնը, զոր կը ճանչնայինք իր վկայաբանութենէն, Անգղիացի հնախօս Բամսէյ գտաւ: 1882ին մէջտեղ հանեց նա փոքր Ասիոյ մէջ նմանօրինակ արձանագրութիւն մը, առանց անուան անձին, եւ որուն վրայ կար Փոխգետն թուականին 300րդ տարին, որ Քրիստոսի 216 տարին կը համապատասխանէ: Առիկայ բացայայտօրէն նմանութիւն մըն էր Աբերկիոսին, զի ուսանաւորին կազմութիւնը աւելուած էր Աղեքսանդր անուան յաւելուածով, կը հետեւի ուրեմն որ Աբերկիոսինը 216ի նախագոյն է: Քանի մը տարի վերջը սակայն Աբերկիոսին բուն արձանագրութեան երկու կտորը գտաւ Բամսէյ: Ահա սոսկ կտորներուն մեծագոյնն է զոր Սուլթան Համիտ ընծայ զրկեց առ երջանկայիշատակն Լեւոն ԺԳ. Քահանայապետ, անոր քահանայական Յորելինին առթիւ: Այդ կտորը ազուցուած էր աղբիւրի մը վրայ. բարեյիշատակ Ազարեան Կ. Պատրիարք համոզեց Սուլթանը թէ Քահանայապետին հա-

(*) Տես թիւ 140, էջ 203:

ճելի ընծայ մը պիտի ըլլար ան և արքայա-
կան իրատէ ելլելով, հակառակ տեղւոյն ժո-
ղովրդային քրթմնջանաց՝ — ո՛չ որովհետեւ
կը հասկնային յարգը, այլ աղբիւրը չէին ու-
զեր քակել տալ, — տեղէն հանուելով Պոլիս
բերուեցաւ. հոս ալ թանգարանի տնօրէնու-
թեան հանած գծաւորութեանց յաղթուելով,
վերջապէս Ազարեան Կ. Պատրիարք Սուր-
թանին կողմէ տարաւ ի Հոռոմ և նուիրեց
Բահանայապետին, որ յիրաւի մեծապէս ու-
րախացաւ այսքան թանկագին նուէրէ մը,
որ կ'արժէր աւելի քան ոսկի և պատուա-
կան քար: Բամսէյ միացուց տոոր միւս կտորն
ալ գոր տարած էր ի Սկովտիա, Հոռոմայ Լա-
տերանեան թանգարանին մէջ իբր գանձ
պահուած են այս երկու կտորները:

Առաջարկեալ նիւթիս չի պատկանիր հոս
մասնաւորապէս զբաղիլ այս յիշատակարա-
նիս վրայով և յիշել անոր յառաջ բերած
հնախօսական վիճարանութիւնները, որոնց
վրայ մասնաւոր երկասիրութեանց մէջ ընդ
երկար խօսուած ու ճառուած է: Միայն պի-

տի ըսենք թէ բողոքականները իրենց գա-
ւանած գաղափարներու պաշտօնանութեան
համար շատ նեղ ինչալով այս արձանագրու-
թիւնէն, թէ և մտաբերեցին զայն ցոյց տալ
իբր հեթանոսական արձանագրութիւն մը,
սակայն իրենց այս ճիգերը ուրիշ բան չեղան
իթէ ոչ տարապարտուց և զրաջան վաստակ.
և գիտնոց առջեւ ամօթապարտ եղան: Հե-
տեւելով հետքերուն տշխարհահոչակ Տէ Բոս-
սիի, այս արձանագրութեան մէջ պիտի տես-
նենք յաւէտ «քրիստոնէական արձանագրու-
թիւններու թագուհին»: Արդ, Աբերկիոսի
արձանագրութիւնը, որ հետաքրքրական է
քրիստոնէութեան ամէն վարդապետութիւն-
ներուն նկատմամբ, առաւել ևս այնպէս է
Ս. Հաղորդութեան խորհրդոյն նկատմամբ:

Արձանագրութիւնը, որ ինչպէս ըսինք,
քանդակուած էր գերեզմանական քարկոթո-
ղի մը վրայ. կազմուած էր քանդակու ու-
տանաւոր տողերէ, որոնց իւրաքանչիւրը
գրուած էր տակէ տակ երկու տողի վրայ.
ահա թարգմանութիւնը:

Ընտրեալ ֆաղափին զայդ յօրինեցի
Ի կենդանութեան՝ զի ունենաւ (երբ ասեմը գայ)
մարմնոյս օրեւանն հոս.
Անունս է Աբերկիոս աշակերտն (եւ)
անաւստ հովուիկն,
Որ կ'արածէ ոչխարաց հօտերն լեռներու
եւ դաշտերու վրայ,
Որ ունի մեծ աչիւր որ կը նայիկն
ստեղծութիւն:
Ան սորվեցուց ինծի հաւատարիմ ուսումը (կենաց):
Որ որկեց զիս ի Հոռոմ որպէս զի նկատեմ
քաղաւորութիւնը
Ու տեսնեմ քաղաքիկն ոսկեհունն պատմութեանս
ոսկեօյիկ պճնագարդ
Ու հոն տեսայ ժողովուրդը՝ շքեղ կնիքով
դրոշմուած հիւսնայի:
Ու Սուրիոյ տեսայ դաշտերն ու անեկն ֆաղափները
նաեւ Մծքիկը
Անցնելով Եփրատէն: Իսկ անեկն տեղ
հանդիպեցայ (ընտանեքար) խօսակիցներ
Ունենալով դուզնափայ ինչ...
Իսկ հաւասքն անեկն տեղ եղաւ ինծի առաջնորդ

Ու մասոյց անկեմորեք կերակրե՛ր՝ ձուկն աղբիւրէ
 Մեծ, մաքու՛ (ձուկ) զոր բունեց
 Կոյսն ողջախոն
 Ու տուա քարեկամներուն ունեղու յաւերժաբար
 Գինի ունենալով ազնիւ անապակ մասնուակելով
 (Գինին ջուրի) խառնուած հացի հետ:
 Այս անկեր մօտ կեցած եւ Արեւիկոս գրուեցի
 որպէսզի հոս արձանագրուին
 Տիրապէս տարեկան ըրալով
 Եօրանասուն ու երկու:
 Այս քաները ով որ կը հասկնայ եւ ով որ լոյն քաները
 կը զգայ, աղօթք Արեւիկոսի համար
 Եւ ոչ ոք իմ գերեզմանիս վրայ
 ուրիշ մը դնէ
 Ապա թէ ոչ հասնեցանէ Հռոմայեցոց զանձին
 ոսկի դրամ երկու հազար
 Եւ պատուական հայրենիքի Հիւրապոյդի
 ոսկի դրամ մէկ հազար:

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵՒ

ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՄՏԱԾՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՆԵՒ“ ԳՐԲԷՆ

Գ ի թ Լ. — Գ ի. Ե. — Առ անձնութեան ու լոսութեան սիրոյն վրայ:

Դուն ին անձիդ հետ զբաղելու յարմար ժամանակը փնտռե՛, եւ Աստուծոյ քարեառարկաններուն վրայ տեսալ խորհրդածե՛:

Հետաքրքրական քաները մեկդի՛ր թող:

Այնպիսի քաներ կարդա՛ որովհետեւ անիւ գրումս կ'ազդեն քեզ ժամանակ:

Երբ խորշիս անկողնի խօսակցութիւններէ եւ դասարկաշարիկ երթեւեկութիւններէ, ինչպէս լսեալ խորհրդեր եւ գրոյցներ յետի, բաւական ու յարմար ժամանակ պիտի գտնես անշուշտ քարի մօտութիւններով զբաղելու:

Մերոց մեծագոյնները՝ երբ կարելի ըլլաւ, մարդիկներու ընկերութեան կը խուսափէին եւ կը լսալընտէրին Աստուծոյ ծառայել ի ծածուկ:

ՍՐԲՈՒՀԻ ԹԵՐԵԶԻԱ

Մերոց հի Թերեզիա ծնաւ 15 13 Մարտ 28ին Սպալիոյ Ավիլա քաղաքը: Եօթը տարուան եղած ատեն արդէն սկսած էր իր ամենէն կրտսեր եղբորը հետ

կարգաւ Մերոց Վարքը եւ մարդու յախտեանկան վարժանքներուն վրայ խորհրդածել: յախտեան կը կրկնէին տեղադար, յախտեան, յախտեան երջանիկ կամ թշուառ: Այս երկու փոքր գիւցաղները մարտիրոսութեան քաղաքէն մղուած, ելան Ափրիկէ երթալու եւ հոն տնտեսաւորութեամբ մէջ հաւատքի համար մեռնելու: Բայց իրենց մէկ հօրեղբոր կողմէ արգիւցեցան: Այն ատեն մտքերին դրին ճգնաւոր ըլլալ իրենց տան պարտեւին մէջ շինեցին փոքրիկ խորհրդներ, ուր աղօթքով եւ մտածակամով կը զբաղէին: Թերեզիա ջերմեամբ գործէր վարդարան կը գրուեցէր, եւ աղքատներուն օգնելու համար ինքզինքը շատ բաներ կը զրկէր: Սակայն զրուիւր երկու աղէտներ եկան որ իր փրկութիւնը մեծապէս վտանգեցին. ատենք եւնիկերու ընթերցումը եւ մօրը մահը, որ անոր ունեցաւ, երբ դեռ ինքը 12 տարուան էր: Ինքը սիրեց մարմնոյ գեղեցկութիւնը, արդուզարդը եւ երիտասարդներու ընկերութիւնը: Աշխարհ որչափ իր սիրտը մտնէր, նոյնչափ Ս. Հոգին անկէ կ'ելլէր կը հեռանար: Սակայն այս անկարգութիւնը մահու շափ մեղքի չէր հասներ երբեք: Անհամարաթիւ են ունեցած քարոզումը, անուանարկութեան երկուզը եւ պատուաւորութիւնը Մարիա Լուզոր մօրը մեռնելէն յետոյ իրեն մայր ընտրած էր, եւ Աստուծոյ շնորհքը բռնեցին զինքը մղութեան գահավեժին բերանը: Հայրը տենելով թէ տան մէջ աղբիւր մեծ վտանգի ենթարկուած կը գտնուէր, գրաւ զոմիկայ Ավիլայի Օգոստինեան տիկնոջ յանձնը, ուր ուրիշ շատ ազնուական աղջիկներ կը կրթուէին: Յիսուսի շնորհքով եւ իր բարեպաշտ գաւառի քաղաքէն հինքուն յանդիմանութիւններ:

բով դարձեալ ստացաւ իր մասադ Հասակին ջերմեանդուծիւնը:

Հիւանդութեան մը պատճառաւ 18 ամիս յետոյ ստիպուեցաւ հօրը տունը դառնալու: Գնաց այդեկեց հաւ երէց քոյրը, իր Պետրոս հօրեղորոր բով, որ կնոյր մեռնելէն յետոյ աշխարհքէ քաշուած բարեպաշտօրէն կ'ապրէր: Շատ օգտուեցաւ այս հօրեղորոր խօսակցութիւններէն, մտնուածք անոր տուած մէկ գիրքէն: Գտնուեալ Ս. Հեռնիմոսի նամակներ իրեն ազդեցին մեծ խորշակ մը նկատմամբ երկրաւոր բաներու և անհաւն բաղձանք մը նկատմամբ երկնային բարեքերութեւ: Վերջապէս յայտնուեցաւ իր կրօնաւորական կոչումը: Հայրը հաւանեցաւ որ ժամէ Կարմեղոս Լեւոն Տիրուհւոյն Կարգին Մարգեղութեան վանքին մէջ, և հոն սքեմը առնու: Ինքը կը պատմէ թէ երբ հօրս տնէն ելայ վանք երթալու՝ ա'յնքան խորշակ և ընդդիմութիւն գգացի որ կարծես ամբողջ ոսկերքս իրենց տեղէն կը խախտէին և սերտօ կռուութիւն կը խլէին դուրս կը հանէին: Բայց արիւնքար յաղթեց այս դժուարութեան և 1333, Նոյեմբեր 2ին 18 տարեկան Հասակին մէջ Տիրուհւոյն գգեստը կրեցաւ երջանկութիւնը ունեցաւ: Իր հոգին ալ մեռնելէն ժամանակ օժտուեցաւ ա'յնքան յորդ շնորհքներով որ իր անդեալ քոյրը գաւառութիւնները փոխուեցան քաղցրութեան և մխիթարութեան անձրեւներու:

Նոյն տանն Աստուծոյ ընդունեցաւ արտասուքի պարգեւը որ իր ամբողջ կենաց մէջ չարանակուեցաւ: Իր նորնծալութեան միջոցին դառն արցունքով աշխարհի մէջ գործած մեղքերուն թողութիւնը իրենց իր փեսայն անսահման բարութեան և Արցունքին խառնեց նաև Կոնստանտնուպոլսէն աւելի խիստ մահացեցումներ: Իր գգեստութեան տարի մը վերջը ուխտեց իրաւ անպատմելի ուրախութեամբ եւ գուարթ ունի ետք:

Մանր հիւանդութեան մը պատճառաւ ստիպուեցաւ քիչ մը տանն իր քոյրը քովը անցնելու, ուր վերոյիշեալ հօրեղորոր իրեն տուած Օսուկի երգող այրենարանը անունով գիրք մը, որ մատական ընել կ'ուսուցանէր թերեզոյս անպարար կարգաց զայն, տեսնելով թէ իր յօժարութեան համեմատ է, և անոր մէջ գտնելով ինչ որ երկար տանէ ի վեր փնտռած էր և չէր կրցեր գտնել իր հոգեւոր առաջնորդներուն քով:

(Շարունակելի)

ԼԻՎՈՌՆՈՅԷՆ ՆԱՄԱԿ

Լիվոռնո, 28 Մարտ 1914

Գեորգիապետ Գեորգ Մ. Վ. Թերգիսպետան
Խմբագրապետ Կ. Արձազանց Շաքարաբերի
Ի Կ. Պոլիս

Կը խնդրեմ հանձնէմ առաջիկայ գրութիւնը ձեր ազգոցն քերթին մէջ առաջին առթիւ սպազնելով հրատարակել եւ անձամբ իսկ շնորհիւ ընէք յորդորել ձեր ծանօթ բարեկամներ, որպէս զի մեր նպատակին համաձայն օր առաջ իրենց նպատակներ չզրանան:

Մնամ յարգանքով Գեորգ. Գեորգ. Տեառն

Աղօթարար

Պ. Վ. ԱճէՄԻԱՆ

Ժողովրդապետ Հայ. Ուղ.

Ի Լիվոռնո

Ինչպէս ժամանակին առանձին չըջարեւրականով մը ծանօթագրած էինք մեր բոլոր ազգային ընդհանրութեան, այս տարի տեղւոյս՝ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի անուան նուիրուած եկեղեցւոյն երկրորդ հարիւրամեայ տարեդարձին առթիւ, որչափ որ կրնանք չքեղ հանդէս մը կատարելու ջանք պիտի ընենք, եւ այդ տօնախմբութիւնը կարելի եւ զածին չափ փառաւոր ընելու համար, արդէն իսկ ոչ միայն տեղւոյս հայաձէս աւազանիները և ի չըջակայս գտնուող հայասէր անձինք, հապա հաւ Բաալիոյ և Աւստրիոյ կողմերը ընկող հայ ազգին պատկանող և կամ նոյն ազգը սիրող ազնուաւիպ բարեբարները իրենց ձեռնադրութիւնը և առատաձիւր նըպատակները կը շնորհեն և այսպէս մեր արեւելքի մէջ գտնուող բազմաթիւ ազգայիններուն ալ յարի օրինակ կը հանդիսանան, որոնց մէջ մեր վերոյիշեալ չըջարեւրականին բովանդակութեան, ողբոյն ու պահանջման համաձայն իրենց նպատակաւորօրէն օգնութիւնները մեր ձեռքը հասցնող սակաւաթիւ անձինք ալ թէպէտ գովելի են, բայց որովհետեւ շատ մը մեծ անձնաւորութիւններ, որոնք, ինչպէս վստահ ենք, թէ՛ մեր սարքելիք այդ ազգային տօնական հանդիսին մասնակցի կ'ուզեն և թէ՛ միեւնոյն տան իրենց գուարթաւոր տուրքերը կ'ուշադնեն կը յետաձգեն, ասոր համար առաջիկայ գրու-

Թեամբ կը հարկադրուինք մեր նախկին խնդիրքը կրկնելու, ծանուցանելով որ ի սէր ազգութեան եւ ի փառս եկեղեցւոյ, բարեհաճին իրենց ազնիւ սրտէն ըլլաւ յօժարակամ նպաստները մեր ձեռքը օր առաջ հասցնել, որպէս զի մենք ալ առաւելապէս քաջալերուինք մեր ազգին նկատմամբ այդպիսի պատուարներ նպատակակէտին համաձայն պատշաճ հանդէս մը կազմելու եւ ժամանակին պատրաստ եւ անշփոթ գտնուելու:

Մեր հասարակութեան պատկանող այդ բարեպաշտական տօնախմբութիւնը չարթու մը տեւողութեամբ տեղի պիտի ունենայ առաջիկայ Մայիս ամսուն 3էն մինչեւ 10, ամէն օր որոշեալ ժամերուն զանազան հոգեւոր հանդէսներ կատարուելով:

Հիմա այսպիսով կը շատանանք, յետոյ թէ՛ այդ հանդիսին մանրամասնութիւնները եւ թէ՛ բարերար անձինքներէ հաւաքուած նպաստներու ցանկը պիտի հրատարակենք առանձին յօդուածով մը:

Բոլոր նուիրատուներու, այս առթիւ պարգեւած զրամական օգնութիւններուն փոխարէն, Աստուծոյ աւելի առատ վարձատրութիւններ մաղթելով կանխիկ շնորհակալութեամբ կը մնանք միշտ երախտապարտ,

Պ. Վ. ԱՃԷՄԵԱՆ
Ժողովրդապետ Հայ. Ուղ.
Ի Լիվոնո

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԱՍՈՒՊՆԵՐԸ.— Օգոստոս 9—11 խումբ մը Աստուծոյ Պերսէոսի Էտա աստղին կողմէն կ'իջնեն, կ'ակօսեն երկինքը: Աստուծոյ միջոցին մէջ գլուխ ունող փոքր մարմիններ են որ երկրէն քաշուելով մեծ արագութեամբ կը մտնեն մեր մթնոլորտին մէջ, օդին ճնշումէն ու շփումէն կը բռնկին, եւ յիսուն կամ աւելի հազարամէրդ անջրպետ մը կը տրեւէ յետոյ կը լուծուին, կ'անհետանան: Պերսէոս աստղատան փոքրիկ մարմինները յառաջ կու գան 1862ին երեւցած Գ. գիսաւորէն, եւ անոր հետագիծին վրայով կը դառնան արեւուն շուրջը:

Օգոստոս 9—14 ժամանակամիջոցին՝ երեւան կու գան շատ բազմաթիւ աստուծոյ, որոնք կը մեկնին ոչ միայն Պերսէոսի աստղատունէն այլ

երկնագունդին քառասունի չափ ուրիշ այլ եւ այլ կէտերէն:

Կայ ուրիշ ծանօթ խումբ մըն ալ երկնային փոքր մարմիններու, որ Առիւծ համաստեղութեանէն կը մեկնին եւ 1886ին երեւցած Ա. գիսաւորին հետագիծին վրայէն կը թաւլին:

Աստուծոյ կան որ դետին կը մօտենան մինչեւ 50 հազարամէրդ, կան ալ որ 72 հազարամէրդէն վար չեն իջներ:

Աստուծոյ շատ տարբեր են շանթաքարերէն: Այս երկու տեսակ օգերեւոյթներու լոյսն ալ յառաջ կու գայ օդին շփումէն: Բայց աստուծոյ մինչեւ դետին չեն հասնիր, եւ իրենց հանած ձայնը չենք լսեր. մինչդեռ շանթաքարերը դետին կ'իյնան ահագին թնդիւնով:

Այս երկու տեսակ օգերեւոյթներու ծագումն ալ տարբեր է: Աստուծոյ յառաջ կու գան գիսաւորներէ, որոնք իրենց հետագիծին վրայ կը ցանցնեն իրենց զանգուածին մէկ մասը: Եւ այս ցանցնուած մարմինները երկրիս կողմէ յափշտակուելէ առաջ կը դառնան արեւուն շուրջը: Իսկ շանթաքարերը, ամենէն վերջի տեսութեանց համեմատ, բեկբեկած, տրոհուած փոքրիկ լուսնի մը մասնիկներն են, եւ հետեւաբար երկրիս կողմէ շրթուելէ, իլուելէ յառաջ, բուն լուսնի պէս երկրիս շուրջը կը դառնան:

ԼՈՒԻ ՎԷՅԵՆՈՒ ՄՏԱԾՈՒՄՆԵՐԷՆ. — Մարդիկ աստուծու եղբայր են, զիրենք կը սիրեմ, իրենց կը կարեկցիմ:

— Բնաւ մի՛ մոռնար որ քրիստոնեան ըլլալու է խոնարհ բայց վեհ:

— Փոքր զոհողութիւնները պէտք է ընել, իսկ մեծերը, երբ Աստուծոյ դիմէ, ընդունելը բաւական է:

— Ես պղնձ եմ ատելութեան եւ անոր ամէն տեսակներուն հանդէպ, բայց ամէն համակրութիւն կը յուզէ զիս հեշտօրէն:

— Ով որ Աստուծոյ դէմ ելլողներուն չ'ընդդիմանար, անոնց մեղսակից է:

— Կը սիրեմ ազատութիւնը, որչափ որ կաթողիկէ մը կրնայ:

— Իշխանութիւնը շատ կը սիրեմ, ա՛յնչափ կը սիրեմ, որչափ որ կաթողիկէ մը պարտաւոր է:

— Աշխարհ կորուսեր է՝ ազատութիւնը եւ իշխանութիւնը իրարու միացնելու գաղտնիք:

— Օրագրողը՝ հարաւորին դատը պաշտպանելու համար գինուած քաղաքացի մըն է:

— Սիրեցի դանոնք որ հարուածեցի. երբեք չբաղձացի որ մէկը միայ, մահաւանդ մեռնի, մոլորութեան մէջ:

« — Էս ինքզինքն երբեք Հռոմէն իմաստուն չեմ համարիր, ո՛չ վարդապետութեան մասին եւ ոչ բարոյականի:

— Կերակուրը մարդկութեան աղէտներէն մին է։
 — Կան բաներ զորոնք արտասուած աչքերով
 միայն կարելի է տեսնել ինչպէս որ պէտք է։
 — Մարդս որչափ ալ տաղանդաւոր ըլլայ՝ միշտ
 տխուր կողմ մը կ'ունենայ։
 — Իտալեցիները կ'երգէ, Ֆրանսերէները կը խօսի,
 Գերմաներէները կը թքնէ, Անգլիներէները կը փոխէ։
 — Մարդը Աստուծոյ ամենազեղեցիկ գործն է։
 — Այն աչքերը որ չեն լացեր, բան չեն տես-
 ներ։
 — Ազատութիւնը կ'առնուի, չի տրուիր։
 — Վերցո՛ւր աշխարհէն Պետրոսը, եւ ահա դի-
 շեր կ'ըլլայ, եւ այդ գիշերուան մէջ կը կազմուի,
 կը մեծնայ եւ կը հաստատուի Ներոնը։
 — Ժողովուրդին եւ եկեղեցւոյ ազատութիւն-
 ները իրարմէ անբաժան են։
 — Կարգ եւ կանոն ատուին համար եղած է
 սանձը։
 — Արդար ըլլանք ամէնուն, մանաւանդ պար-
 տեալներուն հանդէպ։

Գիրի ՄեքենԱՅԻՆ գաղափարը առաջին անգամ
 1714ին, Մ. Նահանգաց մէջ Հէնրի Միլս յղացաւ եւ
 սկսաւ աշխատել շինելու գործիք մը՝ գրեթէ համար,
 բայց չկրցաւ յաջողութիւն գտնել։ Շինած գործիքը
 շատ մեծ եւ շատ բարդ էր, եւ շատ մը մասերը
 փայտէ շինուած էին եւ գործածութիւնը խիստ
 դժուար։ Անկէ վերջ ուրիշներ ալ փորձեցին եւ ա-
 նոնք ալ չյաջողեցան, սակայն գաղափարը մնաց
 մինչեւ 1875ին, ուր շինուեցաւ առաջիւ գրի մե-
 քենան Մ. Նահանգաց մէջ, թէեւ կատարեալ գոր-
 ծիք մը չէր։ 1882ին կարելի եղաւ կատարելագոր-
 ծել, եւ այս թուականէն յետոյ առաջին անգամ
 Մ. Նահանգաց մէջ գործածութեան սկսաւ եւ շատ
 քիչ ժամանակէն, գրեթէ 2 տարի վերջ, 1884ին,
 ընդհանրացաւ Մ. Նահանգաց եւ Եւրոպայի մէջ։
 Առաջին գրի մեքենային ընկերութիւնը «Րէմինկ-
 թըն» եղաւ, եւ յաջորդաբար նոր ընկերութիւններ
 եւ նոր ձեւով աւելի կատարելագործուած գրի
 մեքենայի ընկերութիւններ կազմուեցան, ամէնքն
 ալ ամերիկեան, մին միւսը գերազանցող նորաբնու-
 տաւելութիւններով։

Առաջին անգամ, 1894ին, հայ տառերով գրի
 մեքենան շինեց «Համընտ» ընկերութիւնը, իսկ
 «Րէմինկթըն» ընկերութիւնը շինեց 1897ին։

Շատ մը ընկերութիւններ աշխատեցան արա-
 բական տառերով գրի մեքենաներ շինել, չյաջո-
 ղեցան, բայց 1912ին, «Եօսդ» ընկերութիւնը կրցաւ
 յաջողիլ, եւ այսօր միայն այս ընկերութիւնն է որ
 արաբական տառերով մեքենայ կը պատրաստէ Հա-
 յու մը շնորհիւ։

ԼԻԱԿԱՏԱՐ ՆԵՐՈՂՈՒԹԻՒՆ

ՄԱՀՈՒԱՆ ԺԱՄՈՒՆ

Ներողութեանց Ս. Ժողովին մէկ վճա-
 րովը, Ս. Հ. Պիոս Ժ. ամէն հաւատացե-
 լոց շնորհեց մահուան ժամուն շահելիք լիա-
 կատար ներողութիւն մը. պայմանաւ որ կե-
 նաց մէջ անգամ մը, իրենց ընտրած մէկ օրը
 եւ Ապաշխարութեան եւ Հաղորդութեան
 Խորհուրդները արժանապէս ընդունելէ յետոյ
 զուրցեն Աստուծոյ ճշմարիտ սիրովը հետեւ-
 եալ ներգործութիւնը։

«Տէր, Աստուած իմ, այսօրուրնէ յօժա-
 րութեամբ և բոլոր սրտանց քու ձեռքէդ
 կ'ընդունիմ ի՛նչ տեսակ մահ որ ինծի հաճիս
 զրկել իր ամբողջ ցաւերովը, վիշտերովը եւ
 տաճնապնդովը»։

Այս աղօթքը նոր չէ. յօրինուած է Թո-
 րինոյի Գոնսուլթա եկեղեցւոյ ժողովրդապետ
 Մեծարելի Յովսէփ Դաֆասսոյէն, որուն յանձ-
 նուած էր նաև մահապարտները մահուան
 պատրաստելու հոգը. զանոնք ամէնքը դար-
 ձի կը բերէր. անոնց կը բացատրէր թէ ի՛նչ-
 պէս, իսպառ համակամութեամբ մահը ըն-
 դունելով, կրնային ամէնէն արդիւնաւոր
 գործ մը ընել։

Այս երանելին Ս. Ալֆոնսոսի խոստովա-
 նահարց համար գրած մէկ ճառին մէջ կար-
 դացեր էր որ ամէնէն աւելի Աստուծոյ հա-
 ճելի ապաշխարութիւնը, ամենավսեմ և ա-
 մենակատարեալ զոհն՝ է յօժարակամ ընդու-
 նիլ մահը մեղաց քաւութեան և աստուա-
 ծային կամաց կատարման համար. Հետեւա-
 բար միտքը զրաւ խնդրել Ս. Հօրմէն որ հա-
 ճի յիշեալ ներգործութիւնը ճոխացնել լիա-
 կատար ներողութեամբ, զոր մահուան ժա-
 մուն ամէն հաւատացեալ կարենայ վաստկիլ։
 Մեծարելին Տոն Պոսգօ՝ այս խնդիրը առաջար-
 կեց Պիոս Ժ. ի, որ կատարեց զայն, բայց
 միայն որոշ թուով անձերու համար. Պիոս Ժ.
 նոյնը ընդհանրացուց բոլոր Եկեղեցւոյ հա-
 մար։

Ի՛նչ շնորհք և ի՛նչ մխիթարութիւն է ա-
 մէն հաւատացեալի համար մտածել թէ մահ-
 ւան ժամուն և նոյն իսկ յանկարծամահ ըլ-

լալու պարագային, կրնայ մարդ լիակատար ներողութիւն վատակիլ, եթէ կենաց մէջ, մէկ անգամ այս համակամութեան ներգործութիւնը ըրած ըլլայ: Մարդ կրնայ ընել այս ներգործութիւնը երբ որ ուզէ, միայն թէ շնորհաց մէջ գտնուի. բայց բուն ներողութիւնը՝ լոկ մահուան ժամուն կը շահի, երբ այն ատեն շնորհաց վիճակի մէջ ըլլայ:

Բաւական չէ այս աղօթքը շրթունքով ըսելը. այլ իրօք ջանալու է խոնարհութեամբ և վստահութեամբ ինքզինքը յանձնել, թողուլ, լքել Աստուծոյ կամքին: Այս պատճառաւ խորհուրդ կու տանք հաւատացելոց որ այս ներգործութիւնը ստեպ կրկնեն, մահաւանդ Ս. Հաղորդութիւնէ վերջը, և մահուան մահածութեամբ գրուուած ժամանակներն:

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀՈՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Այս միջոցին Հռոմի ռախտաւորներուն թիւը երթալով կը ստաւարանայ: Մեծ պանդոկներէն շատերը արդէն իսկ լեցուած են: Արքայան ֆահանայապետը անհատական և հաւաքական շատ մը ունկնդրութիւններ կը շնորհէ:

Հաւատոյ տարածման Գահերէց Վսեմ. Կոթի կարգիւայը, որ 1834 Մարտ 29ին ծնած է Ճենովայի մէջ, իր ծննդեան 80ամեակին աւթիւ շնորհաւորութեան նամակներ ընդունեցաւ ամէն կողմէ, յատկապէս Հաւատոյ Տարածման Ժողովքին իրաւասութեան առկ գտնուող աւելեւան կեդրոններէն: Վսեմ. Կարգիւային ընծայուեցան այլեւայլ նուէրներ, սկիզ, սրբատուք, եկեղեցական զգեստներ ևն., զորոք Ն. Վսեմ. Տէրութիւնը յատկացուց Առաքելութեանց:

Ս. Անդրէասի և Էտիմուրկի Արքեպիսկոպոս Ճէյմս Սմիթ Գերապայծառը Ս. Քահանայապետին ունկնդրութեան ընդունուեցաւ: Էտիմուրկի վերջին արքեպիսկոպոսը մարտիրոսացաւ արեւմուտ Նիդ. սարբթ թագուհիին օրով: Այնուհետեւ նոյն ամիսը թափուր մնաց, մինչեւ որ վերջապէս Լեւոն Ժ. Գ. նորէն արքեպիսկոպոս մը անուանեց նոյն ամիսին:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆ. — Ծաղկաղորդի և Աւագ Եղեթու վսեմ արարողութիւնները հանդիսաւորապէս տեղի ունեցան աւագ թեմի ամբողջ եկեղեցիներուն մէջ: Ծաղկաղարդի կիրակին Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ ձայնաւոր պատարագ մատուց Վ. Պատրիարքական փոխնորդ Արհ. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան: Նոյն օրը երեկոյն տեղի ունեցաւ Գանձարեքի արարողութիւնը. յատ-

կապէս Աթուանիստ Ս Աստուածածին և Ս. Յովհան Ոսկերբան եկեղեցիները լի էին արարող կարգի խումբ: Բաղմութեամբ ջերմեանդ հաւատացելոց: Հինգշաբթի օրը, ըստ սովորութեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ կատարուեցաւ Ս. Մի. Թ. Թ. օրհնութիւնը. նոյնպէս ձայնաւոր պատարագ մատուցուեցաւ Ս. Նորորդութեան մէջ:

Ս. Զատիկ երկրորդ օրը Վալաթիոյ Ս. Փրկիչ Մայր եկեղեցւոյն մէջ պատարագ պիտի մատուցուի Անուն Մարիամու Եղբայրութեան անդամներուն համար և ապա տեղի պիտի ունենայ նոյն Եղբայրութեան աւանդական թափուրը, Ս. Աստուածածնի հրաշագործ պատկերով:

Նորընտիր երեսփոխան Վսեմ. Յովոր էֆ. Խըռապեան, որ Մարտի 29ին Պոլսէ եկաւ, Ամեն. Հոգեւոր Տիրոջ այցելութիւն տուաւ:

Ամեն. Հոգեւոր. Տիրոջ կողմէ Ն. Վսեմ. Տէրութեան փոխարքապետացելութեան գացին Արհ. Յովսէփ Արքեպիսկոպոս Ռոքոսեան և Պատրիարքական Փոխանորդ և Գերլ. Թէրղիպաշեան Գեորգ Գերապայծառը:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ. — Կառավարութեան որոշած բարենորոգմանց դէմ Բաղէշի շրջակայքը յետադիմական շարժում մը յաւաք եկաւ, ապրիլ 1ին: Այդ շարժումին գլուխը անցած էր Խիզան գաւառակէն Միլլա Սէլիմ, որ վերջերս ձերբակալուած էր, բայց ճամբան անոր մարդիկը զայն բռնի առած էին ոստիկան-գինուորներուն ձեռքէն, նաեւ նոյն կողմերու շէյխերէն Շահապետին: Աստիք կարգ մը զինեալ աւազակներով Բաղէշ քաղաքին վրայ յարձակեցան անցեալ չորեքշաբթի օրը, հինգշաբթի քաղաքին արտաքին թաղերը մտան: Ուրբաթ կէսօրին ժողով ետ սղուեցան:

Կառավարութիւնը այս մասին հետեւեալ ղեկայցը հաղորդեց Մամուլին.

«Բաղէշ քաղաքը մտնելու ձեռնարկող հրոսակներուն մէկ մասը իրիկունը (Ապրիլ 2ին) շրջակայ թաղերը մտնելով ամրացաւ. բայց զրկուած փոքր զօրախումբի մը ճնշողական շարժումին հետեւանալով իրենց տեղերէն վտարուեցան եւ անոնց ապաստանած եկեղեցին ալ թնդանօթով քանդուեցաւ: Առաւել կանուխ Եփրիմ Թէփէի վրայ հաւաքուած հրոսակներուն մասցած մասին վրայ յարձակում կատարուելով՝ զօրախումբերն ամբողջովին գրաւեցին եւ ապստամբներուն ամէնքն ալ քաղաքէն վտարուեցան, Միլլա Սէլիմ իր երեք ընկերներով ռուս հիւպատոսարանն ապաստանեցաւ: Քաղաքին մէջ աւաղառութիւն եւ ասպատակութիւն տեղի չունեցաւ: Մասնաւոր շէնքերուն եւ շուկային վրայ յարձակում տեղի չունեցաւ: Խալաթ ու քրիստոնեայ ժողովուրդեան միջեւ փոխադարձաբար վստահութիւնը կը շարունակէ: Ամէն ոք սկսաւ իր գործերովն զբաղիլ եւ խանութները բանալ:

վանէն եկած զինուորական ոյժին հետ հետապնդումը ձեռնարկուեցաւ Միւս կողմէ, շրջականերէն զրկուած զինուորական ոյժերը հետզհետէ կը ժամանեն անդորրութիւնը խանգարել յանդգնողները պէտք եղածին պէս պատժելու եւ նուաճելու համար: Այս պարագաները հաստատուած են կատարուած թղթակցութիւններով:

Ապա հաղորդուեցաւ հետեւեալ զեկոյցը.

«Մուշի գունդին հրամանատարը հետեւակազօրաց, թնդանօթի եւ հրետանիի հետ միասին, Ապրիլ 5ին Պիթլիս հասաւ:

«Մօլլա Սէլիմ երկու ընկերակիցներով տակաւին ռուս հիւպատոսարանն է: Ասոնցմէ զատ 13 հոգի ալ վերջերս հիւպատոսարան ապաստանած, 22 հոգի վիրաւորուած են, որոնցմէ 2ը քրիստոնեայ: Իսլամներէն էրիկ մարդ մը եւ կին մը սպանուած են: Զօրքերէն 6 հոգի մեռած եւ 11 անձ ալ վիրաւորուած են: Երկու ժանտարմա սպանուած եւ մէկ հատ ալ վիրաւորուած է: Դէպքին մէջ մեղսակցութիւն ունեցողներէն 42 հոգի ձերբակալուած են:

«Երկու օրուան կռիւներու ընթացքին, յարձակողները 150է աւելի մեռեալ եւ վիրաւոր ունեցած են: Քաղաքը իր բնականօրէն վիճակը ստացած է: Շրջականերէն ո եւ է տեղի անդորրութիւնը խանգարող դէպք մը տեղի ունեցած չէ»:

— Բաղէշի էջմ. Հայոց Առաջնորդ Սուրէն Վ. Էն ստացուած են հետեւեալ հեռագիրները.

«Քիւրտերն մասոյս 20ին (Մարտ 4. Տ.) քաղաք մտան սոսկալի կռիւէ մը ետք: Քնդակներու տարափին տակ անձամբ զինարան երթալով 150ի չափ զէնք առի մերայնոց համար: Ինծի հետ եկող Հայերէն մին վիրաւորուեցաւ: Զէնքերը բաժնեցի, Ապստամբապետ Սէլիմ Ռուսական հիւպատոսարանն ապաստանեցաւ:

Առաջնորդ ՍՈՒՐԷՆ

Բաղէ 5 Ապրիլ. — Քիւրտերը իրենց նախկին բանակատեղը քաշուեցան: Նոր զօրք հասաւ: Կացութիւնը մասամբ հանդարտած է: Քաղաքին եւ գիւղերու ժողովրդեան ապահովութեան համար այսօր դիմումներ կատարելով, միջոցներ ձեռք առինք: Երեք հայ զինուոր մեռած են: Մէկ քաղաքացի վիրաւոր ունինք:

Առաջնորդ ՍՈՒՐԷՆ

— Բաղէշի և շրջակայներուն մէջ պաշարման վիճակ հրատարակուեցաւ:

— Բաղէշի կուսակալը փոխուեցաւ, տեղը կուսակալ կարգուեցաւ Սըրքի Նախկին կառավարէջ Ապսիւլ Խալիլ պէյ:

•. Բաղէշի Քիւրտերուն յետաշրջական շարժումին հակառակ, կառավարութիւնը հաստատապէս որոշած է ի գործ դնել այն բարենորոգումները, որոնք Արեւել. Անատոլիոյ եօթն նահանգներուն համար որոշուեցան Բ. Դրան կողմէ, համաձայնութեամբ մեծ տէրութեանց:

Այս առթիւ մեծ քայլ մը առնուեցաւ Բ. Դրան հաղորդուած ըլլալով երկու ընդհ. քննիչներու պաշտօնին թեկնածուներուն անունները: Կը յիշուի թէ մէկ կողմէ Բ. Դրան և միւս կողմէ Գերմանիոյ և Ռուսիոյ միջեւ գոյացած համաձայնութեամբ, ընդհանուր քննիչները պիտի ընտրուէին եւրոպական փոքր պետութեանց պատկանող անձերէ և Բ. Դրանը մեծ տէրութեանց կողմէ իրեն ներկայացուած ցանկի մը վրայէն պիտի կատարէր անուանումները:

Արդ, այս թեկնածուներուն ընտրութեան մասին ժամանակէ մը ի վեր եւրոպական դահլիճներուն միջեւ կատարուած բանակցութիւնները, որոնց իրազեկ էր Բ. Դրանը, վերջացան եւ եւրոպական դահլիճները, նկատի առնելով նաեւ Բ. Դրան փոփոքր օր պելժիական Գոնկոյի մէջ ծառայած թեկնածուները ներկայացուին իրեն, հաւանեցան Ռուսոյի ներկայացուցած ցանկին, որ կը պարունակէ երկու Պելժերու, երկու Հոլանտացիներու և մէկ Նորվեգիացի անուններ: Կ. Պոլսոյ դեսպանները այս մասին հարկ եղած հրահանգները ստացած ըլլալով, երկուսդ ոչ զեռպան Բալլապիշինի մարքիզ միւս դեսպաններուն շրջապէսէն նման մը ուղղեց ըսելով թէ սեւրպական դահլիճները ընդունած են ընդհ. քննիչներու պաշտօնին համար Ռուսիոյ ներկայացուցած թեկնածուներու ցանկը, ուստի կ'առաջարկէր այդ ցանկը նոյն իսկ բեռնանցի կերպով հաղորդել Եպարքոսին: Բայց դեսպանները հաւանեցան այս առաջարկին և հետեւապէս դեսպանական ընդունելութեանց պահանջ, մեծ տէրութեանց ներկայացուցիչները զատ զատ Եպարքոսին յանձնեցին վերոյիշեալ երեք պետութեանց պատկանող հինգ թեկնածուներուն ցանկը: Այս անունները գաղտնի պահուած են գիւրտահայի պատճառներով Բ. Դրանը այժմ այս հինգ թեկնածուներուն մէջէն պիտի ընտրէ երկու ընդհ. քննիչները և դեսպաններուն պիտի ծանուցանէ: Կը կարծուի թէ միեւնոյն ատեն պիտի հաղորդէ նաեւ բարեկրօնական ծրագիրը, որ պիտի վաւերանայ կայս. իրասէսով և որուն բովանդակութիւնը համաձայն պիտի ըլլայ ծանօթ ծրագրին:

•. Մեծ տէրութեանց մօտ գտնուող Օսմ. գետապանները, կ'ըսէ Սապան, վերջերս օրուան խեղճներու մասին կարեւոր հեռագիրներ զրգեցին Բ. Դրան: Նախարարաց Խորհուրդը նկատի առաւ զանոնք, որոնցմէ կը հասկցուի թէ Օսմ. տէրութեան և մեծ տէրութեանց միջեւ յարաբերութիւնները շատ բարեկամական են:

•. Կ. Պոլսէն կը գրուի Աթէնքի թեկնածուներուն թէ Ռուսիոյ զօրավար Քոստաս պիտի աշխատի հետեւեալ հիմերուն վրայ համաձայնութեան գոյացելու Բ. Դրան և Աթէնքի դահլիճին միջեւ. կամ 1. Քիոս և Միսիլի փոխանակութիւն 12 կղզիներու շուրջ, կամ 2. Այդ երկու կղզիները Թունասասնի գերիշխանութեան ներքեւ մնան, ըսոյց Վարդաթիւնը Թուրքիոյ յանձն:

նուր և կամ 3. Դրամական փոխարինութիւն ըլլայ Յունաստանի և այդ երկու կղզիները Թուրքիոյ վերաբարձունքին:

Ն. Ռօշէդի քննիչ յանձնաժողովը սա եղբակացութեան յանգեցաւ. Յանձնաժողովը ցաւ կը յայտնէ Ռօշէթի փաստաբան Մ. Մօռիս Պէռնարի, որ արաւեստի գաղտնապահութեան պատրուակելով չէ ուզած յայտնել իրեն դիմող և դատին յետաձգման կարելիութիւնն հաւաստող անձին անունը: Կ'ընդունի իշխանութեան մօտ կը վերլուծէ Ռօշէթի գերը, որ Ռաբէլի տնօրէնին աջակցութիւնը վայելեց: Կը յայտարարէ թէ ցաւալի է որ ընդհ. դատարանը Ֆապոնախարարներուն դիմումը մերժելու չափ դժգոհացած չէ իրեն մէջ: Ցաւալի կը գտնէ դատարանին նախագահ Պիտոյի ընթացքը: Ցաւ կը յայտնէ որ Մ. Պախան ընդհ. դատարանը Ֆապոնի հրամայած չէ գիտցածն բոլոր քննիչ յանձնաժողովին առջեւ: Վերջապէս կը ցաւի որ Մ. Պառլթու իր պաշտօնին բերմամբ ձեռք անցուցած գիր մը պահած և կուսակցական շահու համար գործածած է զայն:

— Երեսփ. Ժողովը մերժելով Տրյահէյի հակառակարկը Մ. Մ. Մօռիս և Քայյօն դատաստանի ենթարկելու մասին՝ ընդունեց Երեսփոխան Գրնաուր բանաձեւը, որ յանձնաժողովին քննութեան արդիւնքն ընդունելով կը պարսաւէ քաղաքական անձերու միջամտութիւնը դատական գործերու մէջ և պետք ցոյց կուտայ օրէնքի մը՝ իշխանութեանց բաժանման մասին: Պառլթու և Ժօնէսի ճառերն ուղադրու եղան: Պառլթու Յանձնաժողովին տեսած գործը քաղաքական անբարոյութիւն և անիրաւութիւն անուանեց. ըսաւ թէ արմատական ընկերվարականներ, որոնք մեծամասնութիւն կը կազմէին քննիչ յանձնաժողովին մէջ, ջանքեր ըրին Մ. Մ. Քայյօն և Մօռիս փրկելու: Մ. Ժօնէս պատասխանելով արդարացուց իր ներդրումը տուութիւնը: Շատ կ'ապաստէր որ Մ. Մ. Պախան և Պառլթու ինքզինքնին պաշտպանէին արմատական-ընկերվարականներու դէմ, որոնք բունն յարձակումներ

գործեցին: Մ. Պառլթու պատասխանելով բարեկամի մը, որ կը հրաւիրէր զինք հերքել իրեն դէմ եղած յարձակումները, ըսաւ. «Աւելորդ է, իրենց լորձունքը զիրենք միայն կ'աղտոտէ»:

— Երեսփ. Ժողովն իր նիստերը յետաձգեց Յունիս 2ին, տառնց ելմացոյցը վաւերացնելու: Մայիսի և Յունիսի համար առժամայ ելմացոյցեր բուէտրկուեցան:

— Տիկին Քայյոյի դատը կը շարունակուի Հուն. բապետութեան նախագահ Մ. Բուանքաուէ Մ. Քայյօյի խնդրանքով վկայութիւն տուաւ Մ. Քայյէթի սպանութեան խնդրին առթիւ: Մ. Բուանքաուէ երգում ընելէ ետք պատմեց թէ ոճրին օրը Մ. Քայյօ ըսած է. «Եթէ Քայյէթ անհատական նամակները հրատարակէ, կը սպաննեմ զայն»: Մ. Բուանքաուէ ի զուր փորձեց հանդարտեցնել Մ. Քայյօն: Հանրապետութեան նախագահին վկայութիւն տալն աննախընթաց իրողութիւն մըն է:

Ն. Սուտ վկաներու զեղծումին առջեւ ունեւուն համար Եէյսիւ-Իւ-Իսլամի Դուաբ ծանոյց ամէն կողմ որ դատի մը համար վկայ լսուելու առթիւ, նախ վկային՝ ներկային ու անցեալին վրայ շուտով մանրազնին քննութիւն կատարուի և այնպէս դատարան ներկայանայ, նաև դատաւարութեան ատեն անոնց յայտարարութիւնները կատարելապէս արձանագրուին անենագրութեան և վճռագրին մէջ:

Նիւ Եօրքէն Ապրիլ 5ին կը հեռագրուի Մեքսիկոյի մասին թէ Թօրթօնի մէջ յեղափոխականներուն և կառավարական զօրաց կռիւը շատ արեւահեղ եղաւ: Երկու կողմէն մեռան 2,000 և վիրաւորուեցան 4,000 հոգի: Կռիւն երեք օր տեւեց կատաղօրէն, մինչեւ որ կառավարական զօրքերը ցիրուցան եղան: Յեղափոխականները գրաւեցին քաղաքը: Օտարականներէն ոչ ոք մեռաւ կամ վիրաւորուեցաւ: Կը կարծուի թէ նախագահ Հուէթմայի անկումը մօտուրուտ է և թէ Մ. Նահանգները պիտի ծանշան Բաւարացի կառավարութիւնը:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	225
Պիւ կենն գրգռն սեժթերի խաբրարանան	229
Ազատութիւն	230
Ս. Հաղորդութեան վարդապետութիւնը	232
Եօրքէնի Գրիսոնէի	234
Լիվառնայէն նամակ	235
Այլեւայլ	236
Լիակատար ներդրութիւն	237
Տեղեկագրական	238

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎԼ. Մ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՍԴՐԱՊԵՏ

ԳԷՈՐԳ Մ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

Տպարան Կ. Արձագանգ Շաքարեղբի, Բնա, Պայրամ փողոց քիւ Ե, Կ. Պալո

ԲԱԺԱՆՈՐԴԱԴՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դէկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դէկ. — Արսասան-
ման տար. Ֆր: 10. վեցամս. 5. — Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՑԷ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրամ փողոց 5, 4.

Պոչիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: Յօդուածներու 5. —
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոշմ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դէկն.:
Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դէկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5. Տպարանս ըստ՝ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար կը տպուին տա-
ռակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարդ-տարէսներ,
մահազգներ, եւն. եւն. Գիրները անմրցելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյտ դո՛ւզ զեւթ
ժնան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Poelten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau.

SUCCURSALES EN TURQUIE :

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets de commerce.

Emission de chèques, et de lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse.

Garde de valeurs publiques etc. etc.

Caisse d'Epargne.

Locations de coffre-fort.